ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7 ԿԸ/3-4/10180-13 26.08.2013

«Ինֆորմացիայի ազատության
կենտրոն» ՀԿ իրավաբան
պրն Գ. Հայրապետյանին

Հարգելի պարոն Հայրապետյան

Ձեր 19.07.2013թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահին հասցեագրված N204-ի 1 գրության (առցանց համար՝ 243C-204D-854B) և 23.08.2013թ. (առցանց համար՝ 5CBB-061A-8D2D) գրություններում նշված հարցադրումների կապակցությամբ հայտնում եմ.

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն տեղեկությունը՝ անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երևույթի վերաբերյալ **<u>օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված և ձևավորված տվյալներ են</u>**՝ անկախ դրանց տնօրինման ձևից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, գծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ): Ձեր գրությամբ պահանջվածը՝ սահմանված կարգով հրապարակված իրավական ակտերի (մասնավորապես՝ «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի) առանձին դրույթների վերաբերյալ պարզաբանումներ են կամ էլ պահանջ՝ տրամադրելու պաշտոնապես հրապարակված և հանրությանը հասանելի իրավական ակտերի պատճենները, ինչը, կարծում եմ, օրենքով նախատեսված չէ: Հետևաբար կարծում ենք, որ Ձեր գրությամբ պահանջվածի նկատմամբ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները կիրառելի չեն:

Անկախ վերը նշվածից, ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և ՀՀ կառավարության 29.07.2010թ. N1007-Ն որոշմամբ հաստատված «Հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթների վերաբերյալ պարզաբանումների տրամադրման» կարգի 4-րդ կետով, իրազեկման կարգով տեղեկացնում եմ.

1. «Նոր նմուշի» հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրումը իրականացվում է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի «դ» ենթակետին համապատասխան: Համաձայն վերջինիս՝ հսկիչ-

դրամարկղային մեքենաներ կիրառող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը պարտավոր են ցանցային կապի միջոցներով ապահովել յուրաքանչյուր հսկիչ-դրամարկղային մեքենայով օրվա ընթացքում իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկության ուղարկումը հարկային մարմին:

Ի կատարումն օրենքի վերոհիշյալ դրույթների՝ սույն թվականի հուլիսի 1-ից կիրառության մեջ են դրվել օրենքին համապատասխան ընդունված՝ ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխանող հսկիչ-դրամարկղային մեքենաներ: «Խոշոր խանութներում» ՀԴՄ-ների կիրառումը պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ խանութները շահագործող տնտեսավարող սուբյեկտների նախորդ տարվա իրացումից հասույթը կազմել կամ գերազանցել է 500.0 մլն դրամը: Սույն թվականի օգոստոսի 1-ին ընդունվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաներին ներկայացվող պահանջները, կիրառման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 26-ի N 1325-ն ու 2005 թվականի հունիսի 1-ի N 946-ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 846-Ն որոշումը, որով, մասնավորապես՝ վերահաստատվել են «նոր սերնդի» ՀԴՄ-ներին ներկայացվող հիմնական տեխնիկական պահանջները և սահմանվել է, որ այդ որոշման գործողությունը տարածվում է 2013 թվականի հուլիսի 1-ից հետո ծագող հարաբերությունների վրա:

«Նոր սերնդի» հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրումը պայմանավորված էր ՀԴՄ-ների ֆիսկալ հիշողություն մուտք գործելը և ֆիսկալ հիիշողության մեջ գրանցված տեղեկատվությունը փոփոխելու հնարավորությունը բացառող ՀԴՄ-ների կիրառման անհրաժեշտությամբ: Մյուս կողմից՝ նոր սերնդի ՀԴՄ-ներ կիրառումը տնտեսավարող սուբյեկտների համար կրճատում է հարկային մարմին ներկայացվող՝ 12 հաշվետվությունները, ստեղծում է հնարավորություն մեկից ավելի սարքերի փոխարեն մեկ սարքի միջոցով կատարել մի շարք գործողություններ (անկանխիկ վճարումների ընդունում, նոր կարգով ՀԴՄ կտրոններով վիճակահանության կազմակերպում, հարկային հաշիվներ դուրս գրելու և այդ հաշիվները էլեկտրոնային ստորագրությամբ վավերացնելու հնարավորություն)՝ ինչը բիզնեսի համար ավելի հարմարավետ պայմաններ է ապահովում:

2. ՀՀ կառավարության 30.10.2008թ. «Հարկային վարչարարությանն օժանդակության նպատակով վիճակահանության անցկացման և պարգևավճարների տրամադրման կարգը հաստատելու մասին» N 1330-Ն որոշմամբ վիճակահանությունն անցկացվում է յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ՝ տվյալ ամսվա երկրորդ շաբաթ օրը: Քանի որ «նոր սերնդի» ՀԴՄ-ների դեպքում շահող թիվը անփոփոխ է ամբողջ ամսվա և բոլոր ՀԴՄ-ների համար, վիճակահանության արդյունքները (շահող համարը) կարող էր կիրառվել «նոր սերնդի» ՀԴՄ-ների կիրառման ամսին հաջորդող ամսից: Սույն թվականի հուլիսի 13-ին անցկացված վիճակահանությամբ որոշված շահող թվով սույն

թվականի օգոստոսի 1-ից «նոր սերնդի» ՀԴՄ-ների կտրոնները մասնակցում են ՀԴՄ կտրոնների վիճակահանությանը: «Նոր սերնդի» ՀԴՄ կտրոններով անցկացվող վիճակահանության մասին տեղեկատվություն կարող եք ստանալ ՀՀ ԿԱ ՊԵԿ պաշտոնական կայքի
http://www.taxservice.am/MD_News.aspx?ntname=MDOfficialNews&nid=1684 էջից:

3. «Նոր սերնդի» ՀԴՄ-ների կիրառումը իրականացվում է՝

«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի.

ՀՀ կառավարության 01.06.2005թ. «Հսկիչ-դրամարկղային մեքենաներին և դրանց շահագործման համար օգտագործվող ժապավեններին ներկայացվող պահանջները հաստատելու մասին» N946 որոշմամբ, իսկ ՀՀ կառավարության 2013 թվականի օգոստոսի 1-ի «Հսկիչ-դրամարկղային մեքենաներին ներկայացվող պահանջները, կիրառման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 26-ի N 1325-ն ու 2005 թվականի հունիսի 1-ի N 946-ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 846-Ն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝ նաև այդ որոշմանը համապատասխան:

ՀԴՄ-ների կիրառմանը և ՀԴՄ կտրոններով վիճակահանության անցկացմանը վերաբերվող իրավական ակտերին կարող եք ծանոթանալ ՀՀ կառավարության պաշտոնական ինտերնետային կայքից (www.gov.am), Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգից (www.arlis.am): Իրավական ակտերը նաև հրապարակվում են Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում կամ Հայաստանի Հանրապետության գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրում:

Հարգանքով՝

Վ.Միրումյան